

78. ԷՐԿՈՒ ՏՈՆ ԲԻՐԱԴԻ ՔԱՆԴԱԻՑ...

Ամենի վախտը քոյը սարն ա պիցրընալիս իլալ էն վախտը, վրեր ղուշրերն ուրանց հետե պոնն տինելիս ըն իլալ։ Մին օր մին հարուստ մարթ հանդան տոն կյանալիս տրեսնում ա՝ մին քոլու մաշի մին մուշահավ ուրան պունումը ճոտը հանալ ա։ Տա ծին քշում ա, կյամ տոն, նուքյրներեն ասում.—Պա կյանալիս մուշահավ ըմ տրեսալ ճուտրհանած, էս տարե մունք սավա ինգյեցենք, մրեր հեյվանը հիբ ը՞նք սար տրննական, սոր պադրաստություն տրեսնք, վրեր էս քշեր պիցրանանք սարը, մրեր քյանա յուրդը։ Նուքյրներին մնամ ըն ղըրմացած՝ տարվա էս վախտը հու վա՞ քյեցալ սարը, վրեր ուրանք պադրաստություն ըն տրեսնում։ Վրեր խազայինն ասում ա, ուրանց հինչ ա՞ իլալ, հանրաթ մին պեն գյունդում ա։

Էտ հարուստ մարթն ուրան իլխավը, չուրբներավը պիցրանում ա սարը՝ ուրանց յուրդը, տրեսնում ավերակ տրեսած։ Մինչև յուրդն ուրուր կանեն, էտ քշեր մին քամե յա պիցրանում, վրեր օգում ա, թա տրեղնք պուկե։ Ըլըշափան մին տրեղան ա վրեր թակում, ցորտն էլ մին տրեղան ա ղրոբիմիշ անում, հիյվրներեն էլ հիքյըվրներեն ուրանց ըն քաշալ, հոգի եկալ, տրեռալ մին կծեգյ։ Ջուրբներեն յափրնչոցումը պրպրզալ ըն, կոչ եկալ։

Էտ քշեր էնքան ծանն ա կյամ, վրեր հիյվրներեն լոխ կուտորվում ըն։ Էտ հարուստ մարթը քոռ ու փեշման հղե յա ինում, կյամ տոն։ Կյանալիս մուշրհավրեն պունը մրեն ա ինգյում, քյինում տրեսնում հի՞նչ... Մուշահավն ուրան պունումը թևերը հետ ա տարալ ճուտերեն յիրա, ինդի յէլ սառալ ուրան ճուտրերավը։ Էտ հարուստ մարթը մուշրհավեն ասում ա.—Այ անասաված, թա տու իմ տոնը քընդեցեր, քու տոնը էլ կըլխետ ասուած քանդիցս։